ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՓՎ/22-2025
ՄԱԿ-Ի «ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԵՎ ՓԱՐԻՋՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՈՒ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 5-ՐԴ ՆԻՍՏԻ

12 փետրվարի 2025 թվական

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ ԷՐ՝

Փոխվարչապետ	**Տ. Խաչատրյան**

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ	Կ. Սարգսյան
Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ	Ա. Մեյմարյան
Արդարադատության նախարարի տեղակալ	Ա. Կարապետյան
Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ	Ռ. Սիմոնյան
Էկոնոմիկայի նախարարի տեղակալ	Լ. Սիրականյան
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ	Ա. Ժամակոչյան
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ	Ա. Մարտիրոսյան
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ	Վ. Կոստանյան
Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի մշտական ներկայացուցչի տեղակալ	Կ. Սոկոլսկի
Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ	Գ. Մանուկյան
Քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալ	Ն. Պետրոսյան
Զբոսաշրջության կոմիտեի նախագահ	Լ. Գևորգյան
Փրկարար ծառայության տնօրենի տեղակալ, Փ/ծ գնդապետ	Ա. Վարդանյան
Վիճակագրական կոմիտեի վիճակագրության պետական խորհրդի անդամ	Ն. Բաղդասարյան
Արտաքին գործերի նախարարության բազմակողմ քաղաքականության և զարգացման համագործակցության վարչության պետ	Դ. Կնյազյան
Առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի գլխավոր տնօրենի տեղակալ	Ն. Բակունց
Ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության պետի պարտականությունները կատարող	Մ. Հովհաննիսյան
Խորհրդի անդամ չհանդիսացող մասնակիցներ	
Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի խորհրդական	Ա. Գասպարյան
Շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության պետ	Ն. Բուդոյան

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության պետի պարտականությունները կատարող	Հ. Աբրահամյան
Զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ	Դ. Կարապետյան
Արտաքին գործերի նախարարության բազմակողմ քաղաքականության և զարգացման համագործակցության վարչության ՄԱԿ-ի և կայուն կայուն զարգացման բաժնի երրորդ քարտուղար	Ա. Հովհաննիսյան
Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ տնօրենի պաշտոնակատար	Ա. Եսոյան
Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ տնօրենի պաշտոնակատար	Ա. Խոջոյան
Փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման վարչության պետի տեղակալ, Փ/ծ գնդապետ	Ա. Դաշյան
Ազգային ժողովի տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի փորձագետ	Հ. Պողոսյան
ՄԱԶԾ կլիմայի, բնապահպանության և դիմադրողականության պորտֆելի ղեկավար	Հ. Ղազարյան
ՄԱԶԾ կլիմայի փոփոխության ծրագրի գլխավոր խորհրդատու	Դ. Հարությունյան
Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի «Անցում էլեկտրական շարժունակությանը Հայաստանում» դրամաշնորհային ծրագրի ղեկավար	Լ. Ներսիսյան
Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի «Անցում էլեկտրական շարժունակությանը Հայաստանում» դրամաշնորհային ծրագրի քաղաքականության և իրավական կարգավորումների փաթեթի մշակման խորհրդատու	Գ. Չատինյան
«Կլիմայական խոստում Հայաստան. խոստումից՝ ազդեցություն» ծրագրի խորհրդատու	Բ. Գևորգյան

ՕՐԱԿԱՐԳԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Խորհրդի անդամների կողմից միաձայն հաստատվեց ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհրդի 5-րդ նիստի օրակարգի նախագիծը:

I. Օրակարգային հարց 1՝ «Կլիմայի մասին» ՀՀ օրենքի նախագիծ.

1. Զեկույց ներկայացրեց՝

1) Շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության պետ Նոնա Բուդոյանը՝ անդրադառնալով քննարկվող օրենքի նախագծին: Նշեց, որ օրենքի նպատակն է ստեղծել իրավական հիմքեր ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանն ուղղված գործողությունների պլանավորման և իրականացման համար՝ ՀՀ միջազգային պարտավորությունների և հանձնառությունների համաձայն, և կլիմայի փոփոխության հարմարվողականության պլանավորման և իրականացման համար՝ երկրի դիմակայունության մակարդակի բարձրացման համար: Հայտնեց, որ բովանդակային շրջանակը սահմանելիս հաշվի են առնվել գործընթացների կառավարման համակարգին, կլիմայի հարցերով խորհրդի կառուցվածքին և դերակատարությանը, կլիմայական ֆինանսավորմանը և դրա շրջանակներում միջազգային համագործակցությանը, կարգավորիչ գործիքներին, չափումների, հաշվետվայնության և հավաստագրման համակարգին, ինչպես նաև կրթության և տեղեկատվական մատչելիությանը վերաբերող հարցեր՝ մանրամասն անդրադարձ կատարելով դրանց բովանդակությանը:

2. Ներկայացվեցին հետևյալ էական դիտարկումները.

1) Հաշվի առնելով, որ հաճախ գերատեսչությունների կողմից օրենսդրական նախագծերի ընդունման անհրաժեշտությունը հիմնավորվում է բացառապես միջազգային պայմանագրերով ստանձնած հանձնառությունների ապահովման համար լիազորող նորմեր սահմանելու անհրաժեշտությամբ, փոխվարչապետը կարևորեց հարցը մասնագիտական քննարկման առարկա դարձնելու անհրաժեշտությունը:
2) Արտաքին գործերի նախարարության բազմակողմ քաղաքականության և զարգացման համագործակցության վարչության պետ Դավիթ Կնյազյանը կարևորեց նախագծի շրջանակում կորստի և վնասի հասցեագրման գործողությունների ներառումը և կլիմայական ծրագրերի մշտադիտարկման և հաշվետվողականության լավարկման անհրաժեշտությունը:

3. Փոխվարչապետի կողմից հանձնարարվեց՝

1) **Արդարադատության նախարարի տեղակալ Աննա Կարապետյանին՝** քննարկման առարկա դարձնել միջազգային պայմանագրերով ստանձնած հանձնառությունները ապահովելու նպատակով ներպետական օրենսդրությամբ լիազորող նորմեր սահմանելու անհրաժեշտությունը՝ քննարկման արդյունքների, այդ թվում՝ հնարավոր այլընտրանքային կարգավորումների վերաբերյալ ներկայացնելով համապատասխան տեղեկատվություն:
2) **Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Արամ Մեյմարյանին՝** նախագիծը մեկ անգամ ևս քննարկել Ֆինանսների, Էկոնոմիկայի և Արտաքին գործերի նախարարությունների հետ և սահմանված կարգով ներկայացնել Վարչապետի աշխատակազմ:

II. Օրակարգային հարց 2՝ «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրական շարժունակության զարգացման ռազմավարությունը և քաղաքականությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծ.

1. **Զեկույց ներկայացրեց՝**
   1) Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ տնօրենի պաշտոնակատար Արմեն Եսոյանը՝ անդրադառնալով քննարկող նախագծին: Նշեց, որ ծրագրի նպատակն է նպաստել տրանսպորտի ոլորտում ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանն ուղղված ՀՀ ազգային նպատակների և Փարիզյան համաձայնագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունների իրականացմանը՝ խթանելով անցումը էլեկտրական շարժունակությանը: Ներկայացրեց ռազմավարության և քաղաքականության իրականացման նպատակները, 2024 թվականի դրությամբ ՀՀ ավտոպարկի վիճակագրությունը, ռազմավարության իրականացման/ֆինանսավորման գործիքակազմը:

2. **Ներկայացվեցին հետևյալ էական դիտարկումները.**
   1) Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի խորհրդական Աննա Գասպարյանը առաջարկեց փոխկապակցված թեմաները ներառել արդեն իսկ ընդունված ոլորտային ռազմավարական փաստաթղթերում:
   2) Փոխվարչապետն առաջարկեց ևս մեկ անգամ քննարկել փաստաթղթում մաքսատուրքից և ավելացված արժեքի հարկից ազատելու վերաբերյալ դրույթներ ներառելու նպատակահարմարությունը, ինչպես նաև դիտարկել բնապահպանական վճարների նպատակային օգտագործման հնարավորությունը:
   3) Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Արամ Մեյմարյանը կարևորեց էլեկտրական մեքենաների գույքահարկի հաշվարկման մեխանիզմի վերանայման անհրաժեշտությունը:
   4) Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Լիլիա Սիրականյանը նշեց, որ նախարարությունն աշխատանքներ է իրականացնում էլեկտրական մեքենաների և հարակից ենթակառուցվածքների ներդրման ճանապարհային քարտեզի մշակման ուղղությամբ:

3. **Փոխվարչապետի կողմից հանձնարարվեց՝**
   1) **Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Արամ Մեյմարյանին՝**
      1. Ներկայացնել ներքին այրման շարժիչով աշխատող և էլեկտրական մեքենաների՝ շրջակա միջավայրի վրա և ենթակառուցվածքների շահագործման տեսանկյունից ունեցած ազդեցության վերաբերյալ փաստաթղթի մշակման ընթացքում օգտագործած համեմատական վերլուծությունը:

2. Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվող ճանապարհային քարտեզը ներառել քննարկվող փաստաթղթում:
3. Նախագիծը ևս մեկ անգամ քննարկել Ֆինանսների, Էկոնոմիկայի, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարարությունների հետ և սահմանված կարգով ներկայացնել Վարչապետի աշխատակազմ:

III. Օրակարգային հարց 3՝ ՀՀ բյուջետային ծախսերում կլիմայական նշագրման հետ կապված աշխատանքներ.

1. Զեկույց ներկայացրեց՝

1) Շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության պետ Նոնա Բուդոյանը՝ անդրադառնալով 2025 թվականի պետական բյուջեում կլիմայական բյուջետային ծախսերի վերլուծության ուղղությամբ իրականացված աշխատանքներին և արձանագրած արդյունքներին: Մասնավորապես նշեց, որ մշակվել է Կլիմայական ծախսերի բյուջետային նշագրման մեթոդական ուղեցույցը և դրա հիման վրա իրականացվել է շահագրգիռ հինգ գերատեսչությունների աշխատակիցների վերապատրաստում, ինչպես նաև համապատասխան բյուջետային ծրագրերի կլիմայական նշագրում, ինչը նախատեսված է նաև «Կլիմայի մասին» օրենքի նախագծով:

IV. Օրակարգային հարց 4՝ Տարեկան հաշվետվություններ և Խորհրդի աշխատանքային ծրագիր.

1. Զեկույց ներկայացրեց՝

1) Շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության պետ Նոնա Բուդոյանը՝ հակիրճ անդրադառնալով Խորհրդի՝ 2025 թվականի աշխատանքային ծրագրին և ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարությամբ սահմանված 2024թ. միջոցառումների կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ հաշվետվությանը:

2. Փոխվարչապետի կողմից հանձնարարվեց՝

1) **Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Արամ Մեյմարյանին՝** Խորհրդի 2025 թվականի աշխատանքային ծրագիրը գրավոր շրջանառել Խորհրդի անդամներին՝ ծրագիրը վերջնականացնելիս վերջիններիս դիտարկումները հաշվի առնելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

21.02.2025

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ